

«Հաստատում եմ»

Հայաստանի շախմատի ֆեդերացիայի
նախագահ՝ Ս.Սարգսյան

« 11 » « մարտի » 2019թ.

Հայաստանի պատանիների առաջնության կիսաեզրափակիչ
մրցաշարի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի պատանիների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարը կանցկացվի
Հայաստանի շախմատի ակադեմիայում (հասցե՝ Շևչենկո 34, ք. Երևան, ՀՀ) ս/թ. մարտի 23-ից
31-ը:

Մրցաշարն անցկացվում է հետևյալ տարիքային խմբերով.

- ա) մինչև 10 տարեկան (2008 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) պատանիներ
- բ) մինչև 12 տարեկան (2006 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) պատանիներ
- գ) մինչև 14 տարեկան (2004 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) պատանիներ
- դ) մինչև 16 տարեկան (2002 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) պատանիներ
- ե) մինչև 18 տարեկան (2000 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) պատանիներ

Մրցաշարն անցկացվում է ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների համաձայն, շվեյցարական
մրցակարգով, 9 խաղափուլով: Ե (մինչև 18 տարեկան պատանիներ) մրցաշարը,
մասնակիցների քիչ քանակի դեպքում, հնարավոր է անցկացնել նաև շրջանային
մրցակարգով:

Հավասար միավորներ վաստակելու դեպքում բոլոր մրցաշարում տեղերը կորոշվեն ըստ.

1. հատված Բուխհոլց -1

2. գումարային Բուխհոլցի ցուցանիշի
3. սև գույնով խաղացած պարտիաների առավելագույն քանակի

Ժամակարգը (բոլոր մրցաշարերում)՝ 90-ական թույլ առաջին 40 քայլի համար, այնուհետև 30 թույլ մինչև պարտիայի ավարտը՝ յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով, սկսած առաջին քայլից:

Հայաստանի առաջնության ուղեգրեր: Հայաստանի պատանիների առաջնության եզրափակիչ փուլին մասնակցելու իրավունք կնվաճեն այն շախմատիստները, ովքեր իրենց տարիքային խմբերում կգրավեն հետևյալ տեղերը.

	Մինչև 10	Մինչև 12	Մինչև 14	Մինչև 16	Մինչև 18
Պատանիներ	12	9	7	7	4

Մրցաշարի բացումը՝ Խաղերի սկիզբը.	մարտի 23-ին	ժամը 12:00–ին:
I տուր՝	մարտի 23	ժամը 13:00
II – IX տուրեր՝		ժամը 11:00

- Խաղասկզբից ուշացման թույլատրելի ժամանակը սահմանվում է 30 թույլ:
- Խաղասրահ չի թույլատրվում ներկայանալ բջջային հեռախոսներով, հակառակ դեպքում խաղացողին կգրանցվի պարտություն: